ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՀՈՒՍԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
պատմական գիտ. թեկնածուներ, ՀԱԻ

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԵՂԵԳԻՍԻ ԶՈՐԱՅ ՏԱՃԱՐԻ ՇՈՒՐՋԸ

ՎԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը 2006-2007 թթ. պեղումներ իրականացրեց Եղեգիս հնավայրում: Մինչ պեղումներն սկսելը՝ տեղանքը մանրազնին ուսումնասիրվեց արշավախմբի կողմից, եւ այդ նպատակով ընտրվեց Զորաց տաճարի արեւմտյան հատվածը: Ամբողջությամբ մաքրվեց գավթի արեւմտյան մասը (արտաքուստ)՝ շուրջ 65 քառակուսի մետր մակերեսով: Այստեղ բացվեցին տապանաքարեր, որոնցից չորսն ունեին հիշատակագրեր: Նորաբաց տապանաքարերի արեւմտյան հատվածում տեղանքն ունի կտրուկ անկում՝ մոտ երեք մետր: Պեղվեց շուրջ 230 մ^2 տարածք, որը գրեթե ամբողջությամբ ծածկված էր հողի ստվար շերտով: Պեղումների արդյունքում բացվեցին հյուսիս-հարավ առանցքով իրար հաղորդակից երեք սենյակներ, որոնց պատերը շարված են երկշար, զանգվածեղ որձաքարերով: Միջուկը լցված էր հողով եւ մանր քարերով: Նորաբաց սենյակների համար, իբրեւ արեւմտյան պատ, ծառայել է 1,1 մետր լայնությամբ եւ ավելի քան 19 մետր երկարությամբ ընդհանուր մի որմածք: Սենյակները դասավորված են հաջորդաբար: Կենտրոնում համեմատաբար մեծ սենյակն է, երկու կողմերում՝ գրեթե իրար հավասար փոքրերը: Միջնապատերը դարձյալ երկշար են՝ շարված նույն սկզբունքով՝ ոչ մեծ քարերով: Բացված սենյակներն ունեն հողե հատակ: Որոշ հատվածներում պահպանվել են թրծած քառակուսի աղյուսներով սալարկի հատվածներ, ինչը վկայում է ավելի վաղ աղ-

Աղ. 1. Կճուճներ



Աղ. 2. Սափորներ

Աղ. 3. Քրեղաններ, նստուկներ վարպետի նշաններով (նկ. 1, 2, 3, 4), ձիթաճրագներ (նկ. 5, 6)

Աղ. 4. Խփեր

յուսաշար հատակների իրողության փաստը: Սենյակների կենտրոններում զետեղված են մեկական միջին չափերի թոնիրներ՝ նախատեսված սենյակները տաքացնելու համար: Դրանց միջին չափերը հիմք են տալիս պնդելու, թե թոնիրները լավաշ-հաց թխելու համար չեն: Հարավային սենյակում պահպանվել է եւս մեկ թոնիր, որի վրայով անցնում է սենյակի պատը, ինչն էլ վկայում է թոնրի՝ ավելի վաղ ժամանակների պատկանելը:

Ուշագրավ է կենտրոնական սենյակը: Նրա հյուսիսային պատի տակ ներքուստ տեղադրված է աղյուսաշար հոր, որի մուտքը գտնվում է սենյակի հատակի տակ: Հորը կոնաձեւ է՝ ստորին մասում 1,3 մետր տրամագծով եւ գրեթե նույքան բարձրությամբ: Սենյակի հյուսիսարեւելյան անկյունում քարե սանդն է՝ ծեծիչ սանդաքարով, կողքին՝ սենյակի արեւելյան պատին հենված մեկ սանդաքար: Ուշագրավ են չինության արեւելյան եւ հարավային պատերին մեկական խորշերում տեղադրված պահարանները: Նորաբաց սենյակներում բազմաթիվ դարակների ու պահարանների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այս պարագայում մենք գործ ունենք միջնադարյան վանական գրչության կենտրոնի գրապահոց-մատենադարանի հետ: Իբրեւ լրացուցիչ կռվան կարող է ծառայել նրա՝ եկեղեցու մերձակայքում գտնվելը եւ սերտ կապը Զորաց տաճարի հետ:

2007 թ. աշնանն իրականացված պեղումներով բացվել է հուշարձանախումբը բոլորող պարսպապատի հյուսիսարեւմտյան հատվածը՝ շուրջ 41 մ երկարությամբ: Այն հիմնականում ավերված վիճակում է, պահպանվել է միայն շարվածքի արտաքին երեսը՝ տեղ-տեղ մեկից երեք շարք բարձրությամբ: Ամենաբարձր հատվածում այն հասնում է 2 մ-ի: Պարիսպը շարված է որձաքարե ճեղքված, կիսամշակ, միջին մեծության քարերով, հողի եւ խճի (մանր քարերի) լիցքով: Պարիսպը հարմարեցված է տեղանքին եւ համապատասխանաբար ունի ուղիղ եւ կիսաբոլոր հատվածներ: Պարսպի նորաբաց հատվածի միջին մասում պահպանվել է ուղղանկյուն ելուստ՝ 90 սմ լայնությամբ եւ 2 մ երկարությամբ: Պարսպապատից ներս՝ նրա եւ նախորդ տարվա պեղումներով բացված հյուսիս-հարավ ձգվող ընդլայնական պատի միջեւ բացվեցին մի քանի կառույցների արեւելք-արեւմուտք ձգվող միջնապատերի մնացորդներ: Դրանք թեեւ շատ վատ են պահպանվել, սակայն ուրվագծում են մի քանի ներքին բաժանմունքների մնացորդներ, այդ թվում՝ մսուրք, սալահատակի մնացորդ, փոքր չափերի պահոցներ եւ մառանի հատվածներ: Պատերը երկշար են՝ հողի եւ մանր քարերի լիցքով, 0,8-1,2 մ լայնությամբ: Բացված նոր կառույցները կապված են 2006 թ. պեղումներով հայտնաբերված համալիրի հետ,



Պեղումների ընդհանուր հատակագիծը

որին հաղորդակցվում են ընդհանուր մուտք-անցումով: Պեղումների ընթացքում Զորաց տաճարի գավթի հյուսիսարեւմտյան անկյան մոտ, արտաքուստ 2,5 մ հեռավորությամբ, բացվեց 1,2 մ երկարությամբ եւ 1 մ լայնությամբ միջանցիկ մուտք, որը տանում է մի նեղ երկարավուն սենյակ (չափերը 4,2x1,8 մ): Սա եւս նախորդ տարիներին բացվածների նման ունի պատրհան-խորշեր: Արեւելյան հատվածում պահպանվել է սալահատակը, որի վրա տեղադրված է վատ մշակված սյան հիմքի քար՝ խարիսխ: Սենյակի հյուսիս արեւմտյան կողմում մի մեծ բացվածք կա, որը թողնում է պահոցի տպավորություն: Այդ հատվածում բացվեց եւս մեկ թոնիր: Նորաբաց սենյակի հյուսիսային կողմի պատը բավականին լայն է (ավելի քան 2 մ): Նրանից հյուսիս բացվեց մի ընդարձակ սենյակ (չափերը 12x 4 մ), որի կենտրոնում կա փոքր միջնապատ: Դրա շուրջը թափված աղյուսները վկայում են միջնորմի մի երեսին աղյուսե պահարան ունենալը: Ուշագրավ է նորաբաց սենյակի արեւելյան պատը, որի առջեւ կա մուտք, իսկ ամբողջ մակերեսը ծածկված է քարե պատրհաններով: Սենյակի հարավարեւելյան անկյունում բացվել է սալերով շարված

քառանկյուն օջախ՝ ամբողջովին լցված մոխրով: Սենյակի պեղումները չեն ավարտվել. նախատեսվում է այն ավարտել ընթացիկ տարում:

Պեղումներով հայտնաբերված հնագիտական գտածոների ողջ տեսականին՝ անջնարակ եւ ջնարակապատ խեցեղենը, մետաղե առօրյա կենցաղային նշանակության առարկաները, բացառյալ ջնարակապատ խեցեղենի, ներկայանում են իբրեւ մենատնտեսական (տնայնագործական) արտադրանք՝ գործածելի հասարակության ունեզուրկ խավերի, համեստ կենցաղով ապրող վանականների առօրյայում:

Անջնարակ խեցեղենը հիմնականում ձեռնածեփ է, կան եւ դուրգով կերտվածքներ՝ տեղացի տնայնագործ բրուտների կողմից, տեղական կավատեսակներով: Դրանք գերազանցապես ուռուցիկ իրանով, հարթ հատակով, դեպի դուրս ճկված շուրթով կճուճներ են: Որոշակի թիվ են կազմում օղակաձեւ նստուկով, ուռուցիկ իրանով, դեպի դուրս եւ ներս ճկված շուրթերով տարբեր չափերի քրեղաններն ու պնակները (բեկոտված): Երկաթե գտածոներում հիշատակելի են բավական լավ պահպանված դանակները: Դրանք առանց բացառության ժամանակակից են նախորդ տարիների պեղումներով հայտնաբերված գտածոներին եւ վերաբերում են ԺԲ.-ԺԴ. եւ ԺԴ.-ԺԶ. դդ.:



Պեղումների երկայնական կտրվածքը

Կավահանքեր Եղեգնաձորի տարածաշրջանում հայտնի են Եղեգնաձոր շրջկենտրոնից 25 կմ հյուսիս՝ Գլաձոր տանող ճանապարհի մերձակայքում[1]*: Եղեգնաձորյան կավը նրբասահ է, դյուրասերվող (ճկվող), մի փոքր կեղտոտ՝ պայմանավորված կրաքարի խառնուրդի առկայությամբ: Համաձայն մասնագիտական դիտարկումների՝ այն միասեռ է, օգտակար*

[1] Геология Арм. ССР, VII, Ереван, 1966, с. 108.

չինարարական աղյուս, կղմինդր եւ կավե տարատեսակ ամանեղեն պատրաստելու համար:[2]

Եղեգիսում բրուտագործական արհեստանոցի առկայությունը բացառվում է: Բացակայում են համապատասխան կառույցները՝ բնորոշիչ արտեֆակտներով: Հնարավոր է, որ բրուտագործը գործել է իրեն հատկացված տնայնագործական բրուտանոց-անկյուններում, կից խոշոր թոնիրներին, դրանք որպես թրծման օջախներ օգտագործելու պարագայում:

Խեցեգործական արհեստանոցներն ու անկյունները սովորաբար տեղադրվում էին թոնիր-օջախ-հնոցներին կից կամ էլ համալիրները պարսպապատող պատերի շրջակայքում: Խեցեգործական արհեստանոցների, անկյունների տեղադրումը պարիսպների մերձակայքում միջնադարյան խեցեգործության առանձնահատուկ բնորոշիչներից է[3]*:*

Պեղավայրի ընդհանուր լուսանկարը

[2] Անդ:

[3] **Մ. Վ. Воеводский**, К истории гончарной техники народов СССР, “Этнография”, № 4, 12. 1960. **А. С. Августиник,** К истории развития керамических сосудов методом врашевания, Труды Ленинградского технологического института, вып. XXIX, 1954. **А. С. Августиник**, К вопросу о методике исследование древней керамики, КСИИМК 69, 1956. **Г. М. Ахмедов**, Неполивная керамика Орен-Кала IX-XIII вв., МИА 67, Москва-Ленинград, 1959.

Անջնարակ խեցեղենի հնագիտական դիտարկումները թույլ են տալիս փաստագրել, որ տնայնագործ վարպետները տեղական կավե հումքի օգտագործմամբ կերտել են առտնին, տնտեսության մեջ լայն պահանջարկ ունեցող բազմաբնույթ առարկաներ:

Անջնարակ խեցեղենը գերազանցապես ձեռք է բերվել բնակելի սենյակների եւ պարսպապատի շրջակայքի պեղումների արդյունքում: Գործածության կերպով դրանք դասդասվում են կանթով եւ անկանթ, միջին եւ փոքր կճուճների:

Կանթով կճուճներ - *բեկոտված եւ ամբողջական: Ունեն գնդաձեւ իրան, կարճ վիզ (ուղիղ պատերով), համեմատաբար լայն բերան, ուղիղ կտրվող շուրթ՝ երիզված տափակ ժապավենաձեւ կամ ուռուցիկ պսակներով: Իրանից դեպի նստուկ պատերն իջնում են կորագիծ թեքությամբ՝ ձեւավորելով տափակ նստուկները: Արտաքուստ մրապատ են: Խեցին խամրած կարմրավուն է, երբեմն գորշավուն, թեթեւ ու բարակապատ: Երկու կողերին կրում են տափակ ժապավենաձեւ կամ ուռուցիկ կլորավուն բռնակներ (Աղ. 1, նկ. 5): Բացառություն է կճուճներից մեկը (իրանի խոշոր բեկոր), որն իրանի կենտրոնում կրում է ունկաձեւ փոսիկազարդով բռնակ: Այն հորինվածքով հիշեցնում է վաղ միջնադարյան (Է.-Թ. դդ.) բռնակ-ունկերը եւ ունի զուտ հարդարանքային (դեկորատիվ) նշանակություն: Բռնակը՝ ծայրում սլաքաձեւ, հպված է կճուճի շուրթին: Խեցին խամրած չիկակարմրավուն է, անփայլ եւ միապատ, թրծումն անհամաչափ (Աղ. 1, նկ. 6): Խեցու հիմքում նկատելի է սեւ շերտ: Կանթով կճուճներից առավել ուշագրավն ու հիշատակելին երկուսն են: Առաջինը լայնափոր, գնդաձեւ իրանով, լայնաբերան, բարակապատ անոթ է՝ առանց վզի չեշտված հատվածի: Պատերը, ուսից որոշակի կորությամբ իջնելով, ձեւավորում են տափակ նստուկը: Ենթադրելի է, որ նստուկի չափերը համադրելի են բերանի բացվածքին: Բռնակը կոտրված է. խեցին՝ կարմրավուն (խամրած), արտաքուստ մրապատ, նշան կրակի վրա գործածելու (Աղ. 1, նկ. 3):*

Երկրորդ կճուճը դարձյալ լայնափոր է, գնդաձեւ իրանով, կարճ վզով ուղիղ կտրվող շուրթով՝ երիզված տափակ ժապավենաձեւ պսակով: Բերանի բացվածքը համադրելի է իրանի շրջագծին: Բարակապատ պատերը, իրանից սահուն կորությամբ իջնելով, որոշակի թեքությամբ ձեւավորում են ոչ մեծ չափերի նստուկը:

Անոթը կողերին ունի տափակ, կիսաղեղ բռնակներ՝կլորավուն միջանցիկ բացվածքով: Կճուճի դաշտը հարդարում է վերադիր բլթակազարդը:

Արտաքուստ թեթեւակի միապատ է, խեցին՝ վարդագույն, քիչ ծակոտկեն: Կավը մանրահատիկ է, թրծումը՝ համաչափ եւ բարձրակարգ (Աղ. 1, նկ. 1):

Միականթ կճուճներ - *միակ օրինակը ձեռնածեփ փոքր չափերի անոթ է, ուռուցիկ, կիսագնդաձեւ, երկմաս իրանով, իրանից շուրթ բարձրացող ուղիղ պատերով, բերանի լայն բացվածքով, ուղիղ կտրվող շուրթով: Պատերից ներքեւ՝ փորի կենտրոնական մասով, անցնում է ուռուցիկ գոտի, որը անոթի իրանը բաժանում է երկու հատվածի: Գոտուց ներքեւ պատերը, որոշակի կորությամբ թեքվելով, հիմքում ձեւավորում են տափակ, ոչ մեծ նստուկը: Կճուճը մի կողին կրում է խուլ, ուղղահայաց դիրքով ունկբռնակ: Այն հորինվածքում ունի երկմաս կերտվածք: Մշակումը կոպիտ եւ անփույթ է, խեցին՝ վառ կարմիր, կավը՝ ոչ մաքուր, թրծումը՝ բավարար: Նման փոքր տարողության միկանթանի կճուճներ մինչեւ վերջին ժամանակներս (Ի. դարի կեսեր) գործածական էին Հայաստանի գրեթե բոլոր գյուղական վայրերում (Աղ. 1, նկ. 4):*

Անկանթ կճուճները երեքն են՝ տարբեր հորինվածքով եւ հարդարանքով: Ամենայն հավանականությամբ գործածվել են կաթնամթերք պահելու համար, քանզի բացարձակորեն չեն կրում թոնրի վրա գործածելու որեւէ հետք:

Կճուճներից առաջինն ունի վառ կարմրափայլ մակերես, ուռուցիկ իրան, ուսին նստած լայն ժապավենաձեւ պսակ՝ հարդարված գծաքաշ գոտեզարդերով: Պատերը, պսակից շեշտված կորությամբ իջնելով, փորի մասում ձեւավորում են կիսագնդաձեւ իրանը, այնուհետեւ կորությամբ իջնում նստուկ: Նստուկը բացակայում է: Դատելով պահպանված բեկորի կերտվածքից՝ կարելի է ասել, որ կճուճն ունեցել է դեպի նստուկ գնացող տրամատած պատեր, տափակ հատակ: Կճուճի դաշտը հարդարում են շուրջանակի անցնող փորագիր գծաքաշ զարդագոտիները, շեղ եւ ալիքաձեւ գծազարդերը: Հարդարանքը կրկնվում է իրանի մի քանի հատվածներում: Բարակապատ է, խեցին՝ թեթեւ, կավը՝ մաքուր եւ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ ու բարձրակարգ (Աղ. 1, նկ. 2):

Կճուճներից երկրորդը (իրանի խոշոր բեկոր)՝ վառ կարմրափայլ, գնդաձեւ իրանով, դեպի շուրթ բարձրացող ուղիղ պատերով, բերանի լայն բացվածքով, երիզված դեպի դուրս փռվող ժապավենաձեւ պսակով է: Ըստ հորինվածքի մանրամասների՝ կարելի է կարծել, որ անոթն ունեցել է դեպի նստուկ իջնող տրամատած պատեր, տափակ հատակ, ոչ մեծ նստուկ: Կճուճի հարդարանքը համեստ է, պարզունակ՝ շուրջանակի անցնող փորագիր գծաքաշ զարդագոտիներով: Խեցին բարակապատ է, սպի-

տակավուն նստվածքի հետքերով՝ առաջացած հողի չփումից: Թրծումը համաչափ է եւ բարձրակարգ:

Կճուճներից երրորդը (իրանի բեկոր) հորինվածքով տարբեր է առաջին երկուսից: Այն երկմաս է՝ բաժանարար ուռուցիկ զարդագոտով, հարդարված շրջան-կետ, գծիկ զարդատարրերով: Գոտուց վեր՝ մի փոքր ներս, դեպի բերան որոշ թեքությամբ բարձրանում են ուռուցիկ իրանը կազմող հարթ պատերը: Շուրթի կերտվածքի եւ բերանի բացվածքի մասին որեւէ խոսք ասելը բացառվում է, քանզի դրանք բացակայում են: Խեցին թեթեւ է, կավը՝ համասեռ, թրծումը՝ համաչափ եւ բարձրակարգ (Աղ. 2, նկ. 3):

Ի մի բերելով կճուճների ձեւաբանա-հորինվածքային մանրամասները, համեստ եւ պարզունակ հարդարանքը՝ կարող ենք արձանագրել, որ ԺԲ.-ԺԴ. դարերում կճուճները կերտվածքում էական փոփոխություններ չեն կրել (գնդաձեւ կամ կիսագնդաձեւ իրան, կարճ վիզ, տրամատած պատեր, փորագիր գծազարդ հարդարանք):

Վերոնշյալ կճուճները համադրելի են միջնադարյան հուշարձաններում (Գառնի, Եղեգիս, Մեծամոր) հայտնաբերված նմանօրինակ անոթների հետ եւ վերաբերում են ԺԲ.-ԺԴ. դարերին[4]*:*

Քրեղաններ *- հիմնականում իրանի բեկորներ են (Աղ. 2, նկ. 5) եւ նստուկներ: Քրեղաններից առաջինը՝ պատրաստված դուրգի վրա, ունի կրունկավոր ոտք-հենակ, շրջանաձեւ, մի փոքր ներս ընկած տափակ նստուկ, որից վեր՝ թեքությամբ բարձրացող պատեր, որոնք աստիճանաբար լայնանալով (կիսաղեղ կտրվածքով)՝ կազմում են բոլորշի իրանը՝ բերանի լայն բացվածքով, ենթադրելի երիզված դեպի ներս կամ դուրս թեքվող ժապավենաձեւ, ուռուցիկ պսակով: Քրեղանը հաստապատ է, հենքը չիկավարդագույն լաքափայլ, արտաքուստ միապատ, ներքուստ մրի հետքերով, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ համաչափ: Քրեղանների սույն տարբերակը համեմատելի է Դվինի, Անիի, Գառնիի, Օրան-Կալայի նմանօրինակ խեցանոթների հետ եւ թվագրվում է նույն՝ ԺԲ.-ԺԴ. դդ. (Աղ. 3, նկ. 1)*[5]*:*

---

[4] **Հ. Լ. Պետրոսյան**, Գառնին IX-XIV դարերում, Երեւան, 1988, էջ 9, աղ. XXIV-8. **Հ. Մելքոնյան, Ն. Հակոբյան**, Եղեգիսի 2001 թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XII, Երեւան, 2002, էջ 98:

[5] **Г. М. Ахмедов,** Неполивная керамика, с. 210-213, табл. 1-3. Հատկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պր. II, աշխատ.՝ Ե. Մուշեղյանի, (Ամի), Երեւան, 1982, էջ 211, 234, 265-67, 272-274, 289. **Հ. Լ. Պետրոսյան**, նշվ. աշխ., աղ. XXVI - 4, 6, 7, XXVII-4, 5, 6. **Н. Акопян, Ф. Бабаян, А. Жамкочян** и друг., Двин IV, Ереван, 2008, табл. 1-3, 4-7.

Քրեղաններից երկրորդը (նստուկի բեկոր, իրանի հատվածով) ունի ձեւաբանական նույն հորինվածքը, ինչ նախորդը, միայն այն տարբերությամբ, որ հենքը կարմրափայլ է, արտաքուստ միապատ եւ քիչ ներս ընկած հատակին, երկու տեղով, արտաքուստ կրում է ինքնատիպ դրոշմ, որոնց նման հորինվածք առայժմ մեզ հայտնի չէ, թեեւ դրոշմանշան անոթներ բավականին զգալի քանակության հայտնի են Գառնիի պեղումներով հայտնաբերված խեցեղեն գտածոներում[6]*: Դժվար է ենթադրել՝ վարպետի նշան է, թե տարողության ցուցիչ կամ այլ գաղտնանշան (Աղ. 2, նկ. 2):*

Մյուս երկուսը միայն նստուկներ են՝ վառ կարմրափայլ հենքով, կրունկավոր եւ հաստապատ: Ներքուստ նկատելի են դուրգի հետքերը, խեցին ծակոտկեն: Թրծումը համաչափ եւ բավարար է (Աղ. 2, նկ. 3):

Նստուկներից մեկը մի փոքր ներս ընկած բոլորշի տափակ հատակին կրում է շրջանաձեւ զարդ՝ ետնախորքում երկարամազ գլուխ (գուցե նշան), կողքին՝ նրբաքաշ խաչպատկեր: Թվում է՝վարպետը կամեցել է շեշտել, որ անոթը պատրաստել է վանքի համար (Աղ. 2, նկ. 4):

Սափորներ-գավեր *- բեկորային են, փոքրաթիվ, բայց հետաքրքիր հորինվածքներով, համեստ հարդարանքով եւ գունային լուծումներով: Օգտագործվել են իբրեւ ջրաման կամ գինու գավ: Բեկորներից առաջինը գնդաձեւ, բարակապատ սափորի իրանի բեկոր է՝ պատրաստված դուրգի վրա, պարզունակ հարդարանքով: Անոթի շիկավարդագույն (քիչ խամրած) դաշտը զարդարում են վզից ներքեւ իրանը շուրջանակի գրկող փորագիր խոր ակոսազարդերը, որոնք կրկնվում են իրանի ողջ մակերեսով, միայն՝ ավելի նրբաքաշ եւ ոչ խոր: Դատելով բեկորի կերտվածքի մանրամասներից՝ կարելի է ենթադրել, որ անոթը եղել է խոշոր չափերի: Օգտագործվել է որպես ջրաման: Խեցին թեթեւ է, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ (Աղ. 2, նկ. 2):*

Սափոր-գավերից երկրորդը նստուկի բեկոր է՝ իրանի հատվածով: Նստուկը կրունկավոր է, կոպիտ եւ տաժեւ, պատրաստված է կավե ժապավենաձեւ շերտերով: Իրանը, ըստ պահպանված հատվածի, եղել է գլանաձեւ, հաստապատ, փորի մասում մի փոքր ուռուցիկ եւ լայնացող: Իրանի մակերեսն անհարթ է, խամրած կարմրավուն, սպիտակավուն նստվածքի հետքերով: Նստուկից անցնում են անկանոն գծաքաշ գոտիներ: Խեցին ծակոտկեն է, թրծումը՝ համաչափ, նույնիսկ բարձրակարգ: Ընդհանրության մեջ կարելի է կարծել, թե անոթը պատրաստել է ոչ հմուտ մի բրուտ, իսկ թրծումն իրականացրել է վարպետ-բրուտագործը:

---

[6] **Հ. Լ. Պետրոսյան,** նշվ. աշխ., աղ. XLIII, XLIV:

Սափոր-գավերից մյուս երկուսը իրանի եւ շուրթի (բռնակով) բեկորներ են: Իրանի բեկորն ունի վառ կարմիր, կոկած հենք: Բարակապատ է՝ պատրաստված դուրգի վրա: Բեկորի դաշտը հարդարում են փորագիր գծաքաշ զարդագոտիներն ու հատվածաբար իրար զուգահեռ գծազարդերը: Հարդարանքը կրկնվում է գրեթե ողջ մակերեսով: Դատելով բեկորի հատվածքից՝ կարելի է ասել, թե սափորն ունեցել է գնդաձեւ իրան, կրունկավոր փոքր նստուկ, նստուկից թեքությամբ՝ կիսաղեղ վեր բարձրացող բարակապատ պատեր, երկար չեշտված վիզ, ուղիղ կտրվող շուրթ՝ երիզված դեպի դուրս ծալած ուռուցիկ պսակով: Սափորը մի կողմի վրա ունեցել է բռնակ, որը պոկված է, պահպանված է հետքը: Խեցին ծակոտկեն եւ թանձր է, կարմրափայլ, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ (Աղ. 2, նկ. 6):

Մյուսը շուրթի եւ իրանի բեկոր է՝ վառ կարմրավուն հենքով (քիչ խամրած): Իրանի հատվածում պահպանված է տափակ կիսաղեղ բռնակը մասամբ թերի՝ հպված անոթի ուսին, պսակից ներքեւ: Խեցին ծակոտկեն է, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ (Աղ. 2, նկ. 1):

Նման սափորները գործածական են եղել հասարակության ոչ ունեւոր խավերի կենցաղում: Հանդիպում են միջնադարյան գրեթե բոլոր հուշարձանների պեղումների միջոցին[7]:

Պնակներ - *Դրանք երկուսն են, բեկորային վիճակում (Եգս. 72.06: Եգս. 75.06): Գործածական են հայոց առօրյա կենցաղում՝ գերազանցապես քաղաքային բնակչության մեջ: Պնակների գործածության իրողությունը քաղաքային բնակչության առօրյա կենցաղում հայտնի էր դեռեւս անտիկ ժամանակներում[8]: Հայ իրականության մեջ դրանց կիրառումը փաստագրվում է միջնադարյան Գառնիի գտածոներով, որոնք Հ. Պետրոսյանը թվագրում է ԺԳ.-ԺԴ. դարերով[9]: Եղեգիսյան պնակներն իրենց հորինվածքով համադրելի են Գառնիի գտածոներին եւ վերաբերում են, անշուշտ, նույն ժամանակներին: Ունեն ոչ խորը, մակերեսային բոլորշի իրան, դեպի վեր բարձրացող ուղիղ պատեր՝ երիզված ուռուցիկ կամ ժապավենաձեւ տափակ պսակով, ներքուստ կարմրափայլ, հարդարված գծաքաշ գոտեզարդերով, թրծումից առաջ եւ հետո լավ կոկած: Բարակապատ են, կավը՝*

---

[7] **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը, հ. 1, նկ. 163. **Կ.Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան**, Դվին II, աղ. 1, 2. **A. A. Kalantaryan, G. Karakhanyan,** Armenia in the cultural context of East and West: ceramics and glass (4-14th centuries), Yerevan, 2009, pl. XLIV 1,2,3. Двин IV, табл. XXX. 1,2.

[8] **Б. Н. Аракелян,** Гарни II, Результаты раскопок 1951-1955 гг., Ереван, 1957, с. 51, 52, рис. 20.

[9] **Հ. Լ. Պետրոսյան**, Նշվ. աշխ., էջ 61:

մանրահատիկ, խեցին՝ քիչ ծակոտկեն, թրծումը՝ անհամաչափ: Պնակներից մեկը (Եգ. 72 - 2006) ներքուստ կրում է սպիտակավուն նստվածքի շերտ՝ առաջացած, հավանաբար, հողի չփումից:

Խփեր-կափարիչներ. *Համեմատաբար մեծաքանակ են, սկավառակաձեւ, ձեռնածեփ, տարբեր՝ հորինվածքի մանրամասներով ու հարդարատարրերով: Տարբերակվում են՝ թոնիրների, կարասների, լայնաբերան խոշորաչափ կամ փոքր տարողության կճուճների. փոսիկավոր, կոնաձեւ եւ կիսաղեղ բռնակներով (թոնիրների պարագայում) խփեր:*

Թոնիրների խփերը խոշորաչափ են, հաստապատ, շիկավարդագույն, շագանակագույն՝ վառ կարմրավուն գունավորմամբ: Շիկավարդագույն եւ շագանակագույն խփերն անզարդ են կամ ակոսազարդ: Խեցին ծակոտկեն է, թրծումն՝ անհամաչափ: Բացառություն է մեկը (Եգ. 150. 2006), որի դաշտն արտաքուստ հարդարված է հախճապակե (վառ փիրուզագույն) ընդելուզված ներդիրներով: Խեցին վառ վարդագույն է՝ կարմրավուն երանգով:

Թոնրի խփերից հիշատակելի է մեկը՝ հաստապատ, հորինվածքում քիչ կոպիտ, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ ոչ համաչափ: Նկատելի է չթրծված սեւ շերտ: Գեղեցիկ է հարդարանքը: Բեկորի դաշտն արտաքուստ հարդարում են դաջազարդ վառ կարմիր շրջան-վարդյակները՝ առանձին շուք հաղորդելով առօրյա կենցաղում սովորական գործածության այդ պարզունակ առարկային (Աղ. 4, նկ. 5):

Կարասների խփեր - *երկուսն են՝ տարբեր հարդարանքով, մշակման տարրերով: Արտաքուստ ունեն վառ կարմրավուն գունավորում, համեմատաբար բարակապատ են, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ համաչափ: Բեկորներից մեկն ունի վառ կարմիր փայլաներկով կոկած հարթ դաշտ՝ հարդարված դրոշմազարդ շրջան-բազմաթերթ վարդյակ զարդատարրերով: Ամբողջության մեջ խուփը եղել է գեղեցիկ եւ նրբակազմ: Դրոշմազարդ խփեր հայտնի են Դվինի պեղումներով (Աղ. 4, նկ. 6):*[10]

Երկրորդ բեկորը (խփի) հաստապատ է՝ հարդարված փորագիր երկրաչափական զարդապատկերներով (գծաքաշ գոտիներ, նշանագրեր հիշեցնող տարրեր):

Խփերի մյուս խումբը, որն արժանի է հիշատակման, խոհանոցային նշանակության է: Պատկանում են կենցաղում լայն գործածություն ունեցող կճուճների եւ իրենց տրամագծերով համապատասխանում են կճուճների բերանների չափերին: Տեսականին հարուստ է եւ բազմատեսակ: Հո-

[10] **Կ. Ղաֆադարյան**, նշվ. աշխ., էջ 202-203, նկ. 178, 179, 180:

րինվածքով նույնն են, ինչ վերոբերյալները: Կենտրոնում կրում են բարձր գմբեթավոր կամ կոնաձեւ, սրածայր բռնակներ (ֆալատիպ), փոսիկավոր ունկ եւ այլն (Աղ. 4, նկ. 2, 3)[11]*: Բռնակների այդ հորինվածքն, անշուշտ, ունի պաշտամունքային հիմնավորում՝ աղերսվելով ժողովրդական զանազան հավատալիքների ու նախապաշարմունքների հետ*[12]*:*

Գմբեթավոր բռնակը միակն է հավաքածուում: Կարմրավուն երանգի է՝ շեշտված գմբեթավոր վերջույթով: Գմբեթը հիմքից տարազատվում է բոլորշի գծաքաշ զարդագոտիով: Համադրելի զուգահեռներ ունի Դվինի, Գառնիի պեղածո գտածոներում:[13] *Հանդես է գալիս ԺԱ. դարից:*

Եղեգիսյան օրինակներն ունեն ավելի ուշ թվագրում. ըստ հնագիտական շերտերի՝ ԺԴ.-ԺԶ. դարեր:

Փոսիկավոր բռնակները երեքն են՝ պարզունակ հորինվածքով, անզարդ, կոպիտ կերտվածքով: Ունեն չիկավարդագույն եւ վառ կարմիր գունավորում: Ձեռնածեփ են, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ բավարար: Թվագրությունը նույնն է, ինչ նախորդինը: Հանդիպում են Դվինում, Գառնիում, Օրան-Կալայում եւ այլուր: Սովորական գտածոներից են՝ փոսիկավոր բռնակ-ունկով: Ուռուցիկ իրանի կենտրոնում բարձրանում է սայրում շրջանաձեւ բռնակը՝ մի կողմում ժապավենաձեւ տափակ ունկով: Պարզունակ են հարդարանքով. մեկը կրում է դրոշմազարդ բլթակավոր շրջաններ՝ կենտրոնում փոսիկ, իսկ մյուսը նիստավոր է՝ հազիվ նշմարելի բաժանարար նիստերով (Աղ. 4, նկ. 4, 5):

Ուղղանկյուն բռնակով խուփը ամբողջական է, վառ կարմրավուն, անզարդ մակերեսով, մասամբ պատված սպիտակավուն նստվածքի շերտով, եզրերն ուղիղ կտրվածքով՝ թեքված մի փոքր վեր: Ձեռնածեփ է, ոչ կանոնավոր շրջագծով, թրծումը՝ համաչափ (Աղ. 4, նկ. 1):

Ճրագներ *- Լուսավորության միջոցներից առավել տարածվածն ու գործածականը, մատչելի՝ հասարակության բոլոր շերտերին՝ ըստ կարողության եւ հասարակության մեջ ունեցած դիրքի: Կավակերտ, պարզունակ կերտվածքով ճրագներն առավել քան գործածական էին գյուղական վայրերում եւ համեստ միջոցներ տնօրինող վանական համալիրներում: Այդ իրողությամբ թերեւս պետք է բացատրել կավե ճրագների մեծաքանակ գյուտերը մշակութային ժամանակագրորեն տարբեր փուլեր ընդգրկող հուշարձանների պեղածոներում:*

---

[11] **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան,** Դվին II, Երեւան, 2002, էջ 87, աղ. XXXVII 6, XXXVIII 4,6:

[12] **Անդ**, աղ. XXXVIII, 4-6:

[13] **Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան**, Գառնի III, Երեւան, 1962, նկ. 28:

Արեւելյան ժողովուրդների, մասնավորապես հայերի ժողովրդական հավատալիքներում ճրագներին վերագրվել է սրբազան խորհուրդ, դիցաբանական բովանդակություն: Ճրագը մշտապես ուղեկցում է արեգակին՝ իբրեւ նրա լուսատու նշանակը: Ճրագի լույսն ու արեգակը հանդես են գալիս միեւնույն հարթության վրա, եւ պատահական չէ, որ արեգակին վերագրվող առասպելական (միֆական) պատկերացումները փոխանցվել են Ճրագին: «Ճրագը մի սուրբ առարկա է, - գրում է Մանուկ Աբեղյանը,- որով երդվում են, եւ ունի նույն հալածող ազդեցությունը, ինչ արեգակի լույսը, ուստի լույսը մարելիս հատուկ աղոթք են ասում, ոչնչացնում տան մեջ գտնվող չարքերի ներկայությունը»: «Կրակը մոտեցավ, չարը խափանեցավ», «Արշալույսը ոչնչացնե գիշերվա չարքերին»[14]*:*

Ճրագները ոչ միայն խորհրդանշում էին ընտանեկան բարեկեցություն եւ օջախի շենություն. «Ճրագդ վառ մնա, օջախդ շեն լինի», այլեւ աշխարհիկ իշխանություն. «Ճրագ թագաւորի այ հրամանին է եւ հրաման թագաւորի ճրագ է ժողովրդեան»[15]*:*

Ճրագներում վառում էին զանազան ճարպեր, ճրագու, որ «լինի նիւթ ճրագաց կամ մոմոյ», եւ բուսական յուղեր. «ձեթ ձիթենեաց ի լոյս եղիցի ճրագ հանապազորդ»[16]*: Հայաստանում գործածում էին կտավատի կամ քունջութի յուղ:*

Եղեգիսի պեղումներով հայտնի կավե ճրագները երկուսն են՝ տարբեր ձեւաբանական հորինվածքով: Ջեռնածեփ են, կերտվածքում՝ կոպիտ: Դրանցից մեկն ունի ոճավորված տերեւի ձեւ, որի համար էլ կոչվում է տերեւաձեւ՝ ընդունված անվանում հայ հնագիտության կողմից: Տերեւաձեւ ճրագները, համեմատական դիտարկումներով, Հայաստանում հանդես են գալիս Թ. դարի վերջերին, Ժ դարում եւ լայն տարածում ստանում ԺԱ.-ԺԳ. եւ հետագա դարերում:

Ճրագը հիմքում թասիկաձեւ է, տափակ, հարթ հատակով, լայնատերեւ հիշեցնող իրանով: Տերեւի շուրթերն ուղիղ կտրվելով՝ համարյա հպվում են իրար: Սուր անկյան տակ ձգվելով՝ վերջույթում ձեւավորում են ելուստավոր աչք-ծորակը: Իրանի մյուս ծայրում պոչուկ-ունկն է: Ճրագը կարմրավուն է, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ համաչափ (Աղ. 3, նկ. 5):

---

[14] **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Ա., Երեւան, 1966, էջ 35-38:
[15] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Երեւան, 1981, էջ 187:
[16] Անդ, էջ 186-187:

Ճրագներում, ինչպես փաստում են Դվինի պեղումներով գտնված օրինակները, օգտագործել են բամբակե պարանահյուս պատրույգ-լուծիչներ[17]:

Ճրագը ձեւով պարզունակ է, անզարդ, բնորոշ տնայնագործ բրուտի միօրինականացված գործունեությանը: Ճրագների վերոնշյալ տեսակը մեծ տարածում ուներ ոչ միայն մեզանում, այլեւ հարեւան երկրներում՝ Վրաստան, Ադրբեջան, Միջին Ասիա եւ այլուր[18]:

Տերեւաձեւ ճրագներին հարաբերյալ գործածական էին նաեւ թասանման քառանկյուն հորինվածքով չորսաչքանի ճրագները, որոնցից է եղեգիսյան գտածոն: Այն կերտվածքում կոպիտ է, մշակումն՝ անփույթ, տաձեւ եւ ձեռնածեփ: Շուրթերին մրի հետքեր են, խեցին՝ ծակոտկեն, թրծումը՝ ոչ համաչափ (Աղ. 3, նկ. 6):

Քառաչք կամ չորս լուծիչով ճրագները գործածական են եղել Արտաշատում, Դվինում, Անիում, Գառնիում[19]: Անիում հանդիպում են նաեւ դրանց մետաղե նմանակումները, որոնք իբրեւ լամպար՝ տեղադրվել են աշտանակների վրա[20]: Վերջին տարիներին կավակերտ համանման ճրագներ (տերեւաձեւ նմանապես) հայտնի են Զիչխանավանքի պեղումներով[21]:

Անջնարակ խեցեղենի քննությունը՝ ձեւաբանական-հորինվածքային, կավահումքային, տնայնագործական-արտադրաբնույթով, չերտագրական տվյալներով եւ համադրելի զուգահեռներով՝ Դվին, Անի, Գառնի, Վրաստան (Տբիլիսի), Ադրբեջան (Օրան-կալա, Կաբալլա եւ այլուր), փաստում է, որ եղեգիսյան անջնարակ խեցեղենը պատրաստվել է տեղում՝ տեղա-

---

[17] **Ն. Հակոբյան** եւ ուրիշներ, Դվին բնակատեղին, Դվինի 2009, 2011-2012 թթ. պեղումների արդյունքները, Հուշարձան տարեգիրք, 2015, թ. Ժ., աղ. V -3:

[18] **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան,** Դվին II, էջ 87, աղ. XXXII 3, 4. XI 5, 6. **Г. С. Есаян,** Материальная культура басейна реки Агстев в развитом средневековье, Ереван, 1992, с. 111, рис. 13. **А. Жамкочян,** Двин IV, гл. II, табл. XVII, рис. 7-12. **Ф. Бабаян,** там же, гл. III, табл. XXI-2. **И. Гзелишвили, О. Ткешелашвили,** Памятники материальной культуры г. Тбилиси (на груз. яз.), Тбилиси, 1961, табл. 17, 19. **Г.М. Ахмедов,** Средневоковый город Байлакан (на азер. яз.), Баку, 1979, табл. 39. **И. А. Бабаев, Г. М. Ахмедов,** Кабала (на азер. яз.), Баку, 1981, табл. 30, рис. 5. **Г. В. Шишкина,** Глазурованная керамика Согда (вторая половина VIII - начало XIII в.), Ташкент, 1979, табл. XVIII 3, 4.

[19] Արտաշատյան եւ Դվինյան գտածոները հրատարակված չեն: **Հ. Լ. Պետրոսյան,** նշվ. աշխ., աղ. XXIX 3:

[20] **Ե. Մուշեղյան,** Հատկանշական ցուցակ.., պր. II, էջ 126, տախ. LIII- (123/1350). **А. А. Хакимов,** Изобразительно орнаментальные образы и мотивы прикладного искусства, в кн.: Художественная культура Средней Азии IX-XIII вв., Ташкент, 1983, с. 101.

[21] **Ա. Նավասարդյան, Տ. Ալեքսանյան, Դ. Միրիջանյան,** Զիչխանավանք, Երեւան, 2015, աղ. V. 1, 2, 3, 4:

ցի վարպետների կողմից, տեղական կավատեսակներով եւ վերաբերում է ԺԲ.-ԺԴ. դարերին[22]*:*

Ջնարակած խեցեղեն - *Եղեգիսը, գտնվելով Հայաստանով անցնող Հյուսիսային տարանցիկ առեւտրական մայրուղում՝ Նախճավան (Նախիջեւան), Վաղարշակերտ, Կապան կենտրոնների հարեւանությամբ, համարվելով Օրբելյանների իշխանական նստոցը, ապա եւ Սյունիքի վարչաքաղաքական կենտրոնը, նշանակալի դեր է խաղացել Վայոց ձորի տնտեսական, արհեստագործական, առեւտրական, մշակութային կյանքում: Ունենալով գյուղաքաղաքի կարգավիճակ՝ Եղեգիսն օգտվում էր որոշակի արտոնություններից ու առավելություններից, իսկ դրանք հնարավորինս ապահովեցին տնտեսության կայուն վիճակ, համեմատաբար բավարար զարգացում:*

Եղեգիսն անմիջականորեն հաղորդակցվում էր իրանական առեւտրա-արհեստագործական հայտնի կենտրոնների հետ՝ Քաշան, Թավրիզ, Սուլթանաբադ, Սուլթանիե, որոնք պահպանում եւ զարգացնում էին խեցեգործական արհեստաճյուղում ձեռք բերած դարավոր փորձն ու մասնագիտական ձեռքբերումները:

«Սուլթանիեն,- գրում է Ֆլորենցիացի առեւտրական Ֆրանչեսկո Բալդուչչի Պեգոլոտտին,- Իրանի վրայով Արեւմուտք եւ Արեւելք տանող առեւտրական ուղիների հանգույցն էր: Նրանով անցնում էր, ըստ Համդուլլա Ղազվինիի տեղեկությունների, Իրանի վրայով Հայաստան եւ Փոքր Ասիայի հարավային մարզերը տանող այսպես կոչված Արեւմտեան ճանապարհը»[23]*:*

Վերոբերյալի իրեղեն ապացույցն են Եղեգիսի պեղումներով հայտնաբերված ջնարակապատ խեցեղեն գտածոները, որոնք թեեւ մեծաքանակ չեն, այն էլ խեցատների տեսքով, բայց հետաքրքիր եւ ուշագրավ են հորինվածքով, ջնարակի որակական տարբերակիչ հատկանիշներով (թափանցիկ եւ անթափանց), հարդարանքի մանրամասներով (անգոբը հեռացու, փորագրում):

Խեցատները հնարավորություն են ընձեռում դիտարկելու եւ տարբերակելու ջնարակման բարդ գործընթացի տեխնոլոգիական զարգացման ժամանակագրական ընդգրկումներն՝ ըստ փուլային տարաբաժանումների սանդղակի, կրած տեխնիկական փոփոխությունները, ձեռք բերած նորամուծությունների յուրացումն ու գործադրումը գործնականում: Փոխադարձ առեւտրա-մշակութային կապերն ու շփումները խթանում էին

[22] **Հ. Մելքոնյան, Ն. Հակոբյան**, Եղեգիսի 2001 թ. պեղումները, էջ 102:
[23] **Pegolotti F.**, La pratica della mereatura, vol. II. London, 1866:

իրանական եւ տեղական արհեստագործությանը՝ համընթաց ընթանալ ժամանակի պահանջներին, հարստացնել խեցեգործական արտադրանքը ժամանակի ճաշակին ու գեղագիտական պահանջներին համահունչ հորինվածքային նոր լուծումներով, տեխնիկական նորագյուտ հնարներով, հարդարանքի առավել արտահայտիչ ու գեղեցիկ զարդատարրերով:

Դիտարկումները թույլ են տալիս հավաստել, որ եղեգիսյան գտածո խեցեղենի ջնարակապատման գործընթացն անցել է զարգացման միմյանցից տարբեր ժամանակագրական շրջաններ՝ ԺԲ.-ԺԴ. եւ ԺԴ.-ԺԶ. դարեր:

Առաջին շրջանին կամ փուլին բնորոշ է բազմագույն նկարազարդումը՝ կատարված առավելապես մի քանի գույների եւ նրբերանգների՝ մուգ եւ բաց շագանակագույն, մուգ եւ բաց, վառ կանաչ, դեղին եւ օխրայի, վճիտ փիրուզագույն, ներդաշնակ համադրմամբ: Գունային համադրությունը մեղմ է, գույները՝ պայծառ եւ արտահայտիչ: Եզակի են միագույն կանաչով ջնարակապատ խեցատները՝ աղամանի փորագիր վանդակազարդ բեկոր եւ տերեւաձեւ ճրագի պոչուկ (Աղ. 5, նկ. 1):

Ջնարակումը, լինելով բարդ գործընթաց, իր որակական հատկանիշներով պայմանավորում էր հարդարման այս կամ այն կերպի կիրարկումը: Անթափանց ջնարակի պարագայում գերակա էին վերջնարակային նկարազարդումը, փորագրումն (гравировка) ու անգոբի հեռացման հնարանքը, ջնարակի խորքային բազմագունությունը: Թափանցիկ ջնարակը համադրվում էր ենթաջնարակային նկարազարդմանը: Փորագրազարդը մեծ տարածում ուներ հայաստանյան հարդարարվեստում՝ Դվին, Գառնի, Վաղարշապատ եւ այլուր: Բազմագույն կապարային ջնարակով պատած եղեգիսյան խեցատները համադրելով Դվինի մեծաքանակ գտածոների հետ, կարելի է թվագրել ԺԲ.-ԺԳ. դարերով[24]*:*

ԺԳ. դարի կեսերից խեցեգործության մեջ նկատելի են ակնառու փոփոխություններ՝ պայմանավորված տարածաշրջանի վարչաքաղաքական-տնտեսական բոլորովին այլ իրավիճակում հայտնվելու հետ: Հակոտնյա մշակույթների ներպայքարի պայմաններում տեղական բարձրակարգ մշակույթն ու տեխնիկական առաջնակարգ նվաճումները բախվում էին դրսեկ քոչվոր նվաճողների մշակութա-արհեստագործական ցածր մակարդակի հետ: Նման իրավիճակը, հարկավ, անբարենպաստ էր տնտեսական-արհեստագործական կյանքի զարգացման համար եւ երկար չարունակվել չէր կարող: Անհրաժեշտ էր հաղթահարել ստեղծված իրավիճակը եւ

[24] **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան**, Դվին II, էջ 94. **Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան**, Գառնի III, տախտ. III- IV:

դուրս գալ մի նոր հարթություն, ձեւավորել բոլորովին նոր մշակույթ՝ դրսեկի եւ տեղականի համաձուլմամբ, որը զորու կլիներ բավարարելու երկու կողմերին: Տեղական բազմափորձ, հմուտ եւ ճարտար արհեստավորներին հաջողվեց հաղթահարել բոլոր դժվարությունները եւ հանդես գալ խեցեգործության մեջ տեխնիկական նոր հնարների՝ բազմագույն ներկերի, ջնարակի նոր (ալկալիական-կալաքարային) բաղադրիչների, նորաձեւ զարդատարրերի եւ հորինվածքների մշակմամբ:

Վերոնշյալ փոփոխությունները պայմանավորեցին զարգացման երկրորդ փուլի ձեւավորումը՝ անցում ալկալիական ջնարակի: Գերակա դարձավ ապակետիպ ալկալիական-կալաքարային ջնարակը, որն ի տարբերություն կապարայինի՝ սպիտակավուն հենքի վրա փռվում էր ապակե թանձր շերտով՝ հնարավոր դարձնելով թափանցիկ ջնարակի տակ կատարած նկարազարդմանը՝ դրսեւորելու գունային երանգները: Գերազանցում են երկնագույն (խուլ եւ թափանցիկ), կանաչա-կապտավուն (խուլ եւ թափանցիկ), երկնագույն (թափանցիկ) եւ անգույն ջնարակները՝ բազմագույն ներկերի օգտագործման պարագայում: Նորություն էին ջնարակները՝ փիրուզա-երկնագույն, կաթնա-ճերմակ, կամ էլ դրանց համակցումը կապույտով: Տարածված էին նաեւ միագույն՝ կանաչ, կանաչա-փիրուզագույն ջնարակները: Նկարազարդումը սովորաբար կատարվում էր բազմագույն ներկերով, այդ թվում եւ՝ սեւ: Թեմուրյան շրջանում (ԺԴ. դարի վերջ ԺԵ. դարի սկիզբ), ձեւավորվում է գեղարվեստական խեցեղենի նկարազարդման գունային նոր համադրություն՝ կապտասպիտակավուն (Աղ. 5, նկ. 3, 4, 6):

Խեցեղենի հարդարանքում գերիշխող է դառնում ծաղկազարդը՝ դուրս մղելով նախորդ դարերում մեծ հարգ ունեցող պատկերազարդին (Աղ. 5, նկ. 5): Խեցանոթներն հարդարվում են բազմագույն, բուսական, երկրաչափական տարատեսակ հարդարատարրերի ներդաշնակ համադրություններով: Զուգակցաբար կիրարկվում են նկարազարդման եւ ջնարակման ենթաջնարակային եւ վերջնարակային հնարները:

Եղեգիսյան օրինակները, փոքրաթիվ լինելով հանդերձ, բովանդակում են վերը նշված բոլոր նորույթները: Կարծում ենք՝ դրանք դրսեկ են, ոչ Եղեգիսյան արտադրանք, քանզի կրում են քաղաքային արհեստագործական մշակույթի դրոշմ: Անոթներից մի քանիսը նմանակներ ունեն արտաշատյան նորագյուտ ջնարակապատ խեցեղենի հավաքածուներում,[25] իսկ դրանք չունեն տեղական ծագում. հավանաբար իրենց հետ Արտաշատի

[25] Արտաշատյան գտածոները հրատարակված չեն:

Աղ. 5. Աղամանի (նկ. 1), քրեղանների եւ պնակների (Նկ. 2-6) բեկորներ

Աղ. 6. Քրեղանների և պնակների բեկորներ



Աղ. 7. Մետաղե առարկաներ՝ պայտեր (նկ. 1),
մանգաղի սայր (նկ. 2), դեղդիր գդալներ (նկ. 3, 4),
թաթակիշ (նկ. 5), անոթի ունկ (նկ. 6),
մախաթի սայրեր (նկ. 7), գամեր (նկ. 8)

տարածաշրջան (մայրաքաղաք) բերել են դրսեկ առեւտրականներն ու ճանապարհորդները:

Գտածոներից բազմագույն նկարազարդման (սեւ, վառ եւ մուգ կապույտ, երկնագույն) նմուշօրինակ է պնակներից մեկը՝ բեկորային վիճակում: Պնակը լայնաբերան է, դուրս փռված շուրթը մի փոքր ներս թեքված, ուղիղ կտրվածքով, հարդարված եռաչար գծաքաշ գոտիներով: Իրանի դաշտը պատած է սպիտակավուն անթափանց (խուլ) կալաքարային ջնարակով, հարդարանքը՝ բուսազարդեր, երկրաչափական տարաբնույթ տարրերի համակցմամբ ձեւավորված զարդանկարներ: Պնակի հատակը գեղազարդում է բազմաթերթ վարդածաղիկը: Ամբողջության մեջ հարդարանքը զուսպ է, անպաճույճ, բայց նաեւ՝ նրբաճաշակ: Հարդարանքը, սակայն, խաթարում են հատակին երեք տեղով պահպանված եռոտանու ոտքերի հետքերը. խոսուն վկայություն այն իրողության, որ թրծման գործընթացն ընթացել է ոչ բավարար պայմաններում (Աղ. 5, նկ. 2):

Կաթնագույն ետնախորքի վրա տեղ-տեղ բաց կապտավուն երանգով, բազմագույն նկարազարդման (բուսազարդ, նկարեն, բնական ներկերի օգտագործմամբ) գույնի եւ զարդապատկերի ներդաշնակ զուգադրում է, Եղեգիսի 2006 թ. պեղումներով հայտնաբերված խեցանոթների հարդարանքը, քրեղաններ (երկուսը) եւ պնակ (բեկոտված):

Խեցատներից առաջինները քրեղանի իրանի զարդագեղ բեկորներ են (երեքը, Աղ. 6. նկ. 1): Քրեղանի դաշտը ամբողջական վիճակում հարդարել են սահուն շիվերն ու կիսագալարները (մուգ շագանակագույն, գծազարդ)՝ շրջանակված մուգ եւ բաց շագանակագույն գծաքաշ զարդագոտիներով: Զարդադաշտն ազատ է, առանց ավելորդ պաճուճանքի, գունային համադրությունը՝ մեղմ: Ջնարակը խուլ (անթափանց կաթնավուն), տեղ-տեղ նկատելի են ճաքեր՝ հավանորեն առաջացած խոնավ միջավայրից: Խեցին վառ կարմրավուն է, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ:

Երկրորդը քրեղանի իրանի խոշոր գեղանկար բեկոր է (Աղ. 6, նկ. 2)՝ շրջանաձեւ, ուռուցիկ իրանով, դեպի ներս թեքվող տրամատած պատերով: Շուրթը դեպի ներս որոշակի թեքությամբ ուղիղ կտրված, պսակված մուգ եւ բաց շագանակագույն երիզագոտիներով: Կարելի է ենթադրել, որ անոթն ունեցել է բարձր կրունկավոր նստուկ, ներս ընկած հատակ:

Բեկորի դաշտը հարդարում է գեղանկար բուսազարդը՝ մատղաշ ծառեր, ծաղկալից թփեր, սահուն, նրբորեն գալարվող տերեւակալած շիվեր: Զարդադաշտը զերծ է ավելորդ պաճուճանքից: Գունային համադրությունը

(մուգ շագանակագույն) մեղմ է, հարդարատարրերը՝ արտահայտիչ, ընդհանրության մեջ՝ դինամիկ ու շարժուն: Ջնարակը կաթնավուն է, խուլ: Խեցին վառ կարմրավուն է, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ: Հարդարանքն առավել քան բնորոշ է ժամանակի (ԺԴ.-ԺԶ. դդ.) իրանական զարդարվեստին:

Պնակ *- իրանի բեկոր, սաղր, դեպի դուրս լայնակի փռվող պատերով, փոքր նստուկով (արտաքուստ), տափակ, շրջանաձեւ հատակով: Հատակը ներքուստ օղակում են գծաքաշ զարդագոտիները (ձիթապտղի կանաչ երանգով): Հարդարանքը զուսպ է եւ պարզունակ, հարդարատարրերը՝ գծաքաշ գալարներ: Հենքը կաթնավուն է, ջնարակը՝ խուլ, խեցին՝ վառ կարմրավուն, թանձր, կավը՝ մանրահատիկ, թրծումը՝ համաչափ:*

Թրծման գործընթացն ամենակարեւորն ու բարդն էր եւ պահանջում էր հատուկ մոտեցում, քանի որ այդպիսի գործելաձեւով (режим) էին պայմանավորված ջնարակի որակական հատկանիշները՝ փայլը, հարթ եւ ողորկ մակերեսը, ճաքերի բացակայությունը, ջնարակի հեշտությամբ չպոկվելը եւ այլն: Թրծման գործընթացում համապատասխան ջերմաստիճանով էր պայմանավորված նաեւ ջնարակի բնույթը, քիմիական բաղադրությունը: Երբեմն նկարազարդող ներկերը պահանջում էին թրծման առավել բարձր ջերմաստիճան, քան ինքը՝ ջնարակը:

Հայկական միջնադարյան ալքիմիական ձեռագրերն ունեն հատուկ նշումներ թրծման գործընթացի եւ կրակի վերաբերյալ. «Թող որ չորանայ եւ ապա թրծէի զինքն ի բարկ կրակ», «Եւ քուրայն ստայ որպէս ոսկերչու, զթուրթայն (խեցատը) յորժամ դնես ի կրակն՝ նախ սակաւ սակաւ ջերմացոյ մերձ ի հուրն, ապա դիր: Նոյնպէս եւ երբ հանես ի հրոյ մի զարներ ի պաղ տեղ, չի բեկի»[26]*:*

Քննարկվող անոթներն, անշուշտ, ունեն դրսեկ ծագում՝ թերեւս Թավրիզյան, քանզի Եղեգիսը եւ շրջակա բնակավայրերը չունեին խեցեգործական այնպիսի արհեստանոցներ, ուր պատրաստվեին նմանօրինակ գեղակերտ խեցանոթներ: Եղեգիսը, գտնվելով Թավրիզով եկող առեւտրաքարավանային գլխավոր ճանապարհի վրա, մշտապես սերտ կապերի մեջ էր Հայաստան մտնող առեւտրականների հետ: Զի բացառվում եւ Սիրիա - Միջին Ասիա գործոնը[27]*:*

---

[26] **Կ. Ղաֆաղարյան,** Ալքիմիան Հայաստանում, Երեւան, 1940, էջ 60:

[27] **Ա. Բաբաջանյան,** Հայաստանի ԺԴ.-ԺԵ. դդ. ջնարակած խեցեղենը, Էջմիածին, 2014, Ե., էջ 114-116:

Իբրեւ վերջաբան՝ կարող ենք հավելել, որ եղեգիսյան ջնարակած խեցեղենի հավաքածուն ներկա վիճակով մեզ հնարավորություն չի տալիս արձանագրելու նրա՝ տեղական արտադրանք լինելու իրողությունը, փաստագրելու, որ տեղում առկա են եղել նմանօրինակ խեցեղենի արտադրություն կազմակերպելու բոլոր անհրաժեշտ պարագաները համապատասխան արհեստանոցներով: Մեր տրամադրության տակ չունենք սույնը վավերացնող որեւէ կռվան, թեեւ քննարկվող ժամանակաշրջանում Եղեգիսը, գտնվելով Դվին-Պարտավ ճանապարհին, սերտ կապերի մեջ էր Վայոց Ձոր անցնող եւ տեղի քարավանատներում հանգրվանող վաճառականների հետ, որոնք կարող էին իրենց խորհուրդներով, ապրանքատեսակներով օգնել տեղական արհեստավորներին:

Քննությունից ակնհայտ է, որ եղեգիսյան խեցեղենն անմիջական աղերսներ ունի Դվինի, Անիի, Գառնիի, Արտաշատի (երբեմն մայրաքաղաքի տարածքում պեղումներով գտնված) Լոռեբերդի դրսեկ՝ իրանական խեցեղենի գտածոների հետ եւ վերաբերում է նույն ԺԳ.-ԺԴ., ԺԴ.-ԺԶ. դարերին:[28]

Մետաղե առարկաներ - *գտածոները փաստում են Եղեգիսում դարբնոցների առկայություն, որտեղ կռել-կոփել են ոչ միայն աշխատանքի գործիքներ, զենքեր, այլեւ առտնի գործածության անհրաժեշտ առարկաներ, անգամ զարդեր, զորօրինակ երկաթե մատանի (թերի)՝ օվալաձեւ վահանակով: Մատանին օքսիդացած է, եւ դժվար է խոսք ասել նրա վահանակի հարդարանքի վերաբերյալ:*

Աշխատանքի գործիքներից հիշատակելի է մանգաղի կամ մանկաղի սայրը: «Գալարեալ, ման գալով... ի քաղել զցորեան, զխոտ», «...առաքի մանգաղ զի հասեալ են հունձք» (Աղ. 7, նկ. 2):[29]

Թաթակիշ - *ակշթաթ, տաշտաքեր, տաշտաքերիչ, թի: Հացաթխման փոքր երկաթե կամ պղնձե գործիք է՝ նախատեսված խմորի տաշտը քերելու համար: Կենցաղում ունեցել է լայն գործածություն: ՀՊ թանգարանում պահվող թաթակիշներն հայտնի են Դվին, Անի, Գառնի, Անբերդ հնավայ-*

---

[28] **A. Kalantaryan, G. Karakhanyan,** եւ ուրիշներ, նշվ. աշխ., pl. XXIV, XXV, XXVII. **Բ. Ն. Առաքելյան, Գ. Հ. Կարախանյան,** Գառնի III, էջ 92, 96, տախ. V - 1, 2. **Հ. Լ.Պետրոսյան,** նշվ. աշխ., աղ. XXXVIII 2-3, աղ. XXXIX 6. **Ա. Բաբաջանյան,** Հայաստանի ԺԴ.-ԺԷ. դդ. ջնարակած խեցեղենը, «Էջմիածին», 2014, Է., աղ. 2, նկ. 1-2-3:

[29] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, էջ 203. **Հ. Լ. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 47, նկ. 9. **Հ. Սիմոնյան, Ի. Ղարիբյան եւ ուրիշ.,** Լօռե բերդաքաղաքը (2009-2013 թթ. պեղումների արդյունքները), Հուշարձան, 2015, աղ. 2. 3, 4, 7, 8, 11, 12, աղ. 4, 13, 16, 17. **J. Soustiel,** La céramique Islamique, L'Iran du XIIIe au XVe siècle, Paris, p. 188, p. 206-207, 211, 276.

բերի պեղումներով:[30] Դրանք ունեն բոլորշի, կիսալուսնաձեւ գլխամաս, կարճ, տափակ կոթառ՝ ծայրում կեռիկ՝ կախելու համար: Եղեգիսյան օրինակը շատ նման է վերը նշվածներին (Աղ. 7, նկ. 5):

Խմբում առավել ուշագրավը գդալիկներն են, որոնք գործածել են, անշուշտ, ոսկերիչ եւ արծաթագործ վարպետները զանազան դեղափոշիներ վերցնելու նպատակով: Գդալներից մեկը փոքր չափերի է, ոչ խորը բերանով, տափակ պոչուկով: Երկրորդի բերանը մեծ է եւ խորը, պոչուկը՝ կլորավուն ու երկար: Բացի վերոնշյալ գործածությունից, կարող էին ունենալ եւ այլ կիրառություն (Աղ. 7, նկ. 3, 4):

Պայտեր *- երկաթե, մեկն ամբողջական, մյուսները (չորսը)՝ բեկորային, հավանաբար ձիու, փոքր չափերի: Իրանի վրա պահպանված են գամերի անցքերը: Պայտար արհեստավորներն Հայաստանում ունեին մեծ հարգ, հիշատակվում է անգամ «նալբընդոց թաղ» (Անի) անվանումը: Հայտնի են գրեթե միջնադարյան բոլոր հուշարձաններում՝ Դվին, Անի, Գառնի եւ այլուր (Աղ. 7, նկ. 1)[31]:*

Բեւեռներ, գամեր *- զարդագամեր, լայն գործածություն ունեին առօրյա կենցաղում եւ շինարարության մեջ: Գրավոր տեղեկություններով իմանում ենք, որ պարսպապատ քաղաքներն ու ամրոցները, արքայական-իշխանական պալատներն ու դղյակները սովորաբար գոցվում էին փայտե կամ մետաղապատ հաստահեղույս դռներով. «դրունք ադամանդեայ», «ադամանդեայ պարիսպս, նա խորտակեալ զդրունս ադամանդ (անխորտակելի), որոնք ուռամբ զբեւեռսն պնդեսն» (Աղ. 7, նկ. 8)[32]:*

Հարդարվում էին տարբեր չափերի ու ձեւերի (գլխիկների) գամերով. «Ի շրթունս խորահատակ հիմանց ծովուն դնէ դրունս ահաւորատեսս, հաստահեղոյսս, բեւեռապինդս»[33]:

Գամերն ունեն խոշոր սնկաձեւ, ողորկ գլուխ, երկար կամ կարճ պոչուկ: Հաճախ բեւեռվում էին իբրեւ զարդ եւ կոչվում զարդագամ:

Ունեն համադրելի օրինակներ միջնադարյան գրեթե բոլոր հուշարձաններում՝ Դվին, Գառնի, Ամբերդ եւ այլուր:[34]

---

[30] Դվին՝ 1913-69-1951, 1981-70-1955, 1913-129-1961, 21-98-1966, թ 10 $Ա_2$ $Ա_3$ հրատարակված չեն:

[31] **Կ. Ղաֆադարյան,** նշվ. աշխ., հ. 1, նկ. 37. **Հ. Լ. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 54, նկ. 12:

[32] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1, էջ 26, էջ 486:

[33] **Թովմայի վրդ. Արծրունւոյ**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 479:

[34] **Ա. Քալանթարյան**, Դվին 1, Կենտրոնական թաղամասի պեղումները, 1964-1970 թթ., Երեւան, 1976, էջ 38, նկ. 11. **Հ. Լ. Պետրոսյան,** նշվ. աշխ., էջ 55, նկ. 2-5. **Н. Акопян,** Двин IV, Раскопки центрального квартала, табл. XIV:

Մյուս առարկան, որին կկամենայինք անդրադառնալ, պղնձե ինքնատիպ հորինվածքով անոթի շուրթի բեկոր է՝ բռնակով, արտաքուստ կպած շուրթին (Աղ. 7, նկ. 6): Դատելով բռնակի ձեւից եւ տեղադրման դիրքից՝ կարող ենք ենթադրել, որ դրանք եղել են թվով երեքը եւ բռնակ-կախիկների դեր են կատարել, քանզի ունեն հատուկ անցքեր նրբահյուս շղթաներ ագուցելու համար: Չի բացառվում, որ շուրթի բեկորը պատկանել է բուրվառի կամ խնկամանի: Հոգեւոր սպասքի նմանօրինակ կերտվածքով անոթներ հայտնի են Հայաստանի մի շարք հուշարձաններում[35]*:*

Գտածոները թեեւ փոքրաթիվ, սակայն բազմաբնույթ են եւ որոշակի պատկերացում են տալիս Եղեգիսի դարբնոցային գործունեության վերաբերյալ, որն, ամենայն հավանականությամբ, ընդգրկել է կենցաղի գրեթե բոլոր բնագավառները: Համադրելի զուգահեռներով, հուշարձանի ժամանակագրական ընդգրկումներով, դրանք կարող են վերաբերել ԺԴ.-ԺԶ. դարերին, երբ Եղեգիսն ապրում էր տնտեսական բեղուն կյանքով:

РЕЗЮМЕ

В 2006-2007 гг. экспедиция Института археологии и этнографии Национальной Академии Наук Республики Армения осуществила раскопки памятника Егегис. До раскопок была изучена вся территория памятника. Рескопки начались в наружной части западного участка храма. Открылись несколько надгробных камней с памятными надписями и три комнаты с промежуточными выходами. Пол комнат был земляным, однако местами сохранились кирпично-плиточные покрытия. В центре комнат располагались тонири, предназначенные для отопления. В 2007 г. была открыта северо-восточная часть оборонительной стены храма, построенная базальтовыми полутесанными блоками. Внутри оборонительной стены, в направлении северо-восток, были раскопаны полуразрушенные комнаты. Одна из них была узкой и длинной, на стенах имелись ниши. Материалы (неполивная и поливная керамика, различные металлические предметы, все местного происхождения кроме поливной керамики - вероятно из Тавриза) представляют быт простого, бедного населения и скромно живущего монаха в течении XII-XIV вв.

[35] **Ն. Հակոբյան,** Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը (IX-XIII դդ.), Երեւան, 1981, էջ 97, 39, աղ. IV-ա-3, IV-բ-6:

SUMMARY

The expedition of the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sceiences of the Republic of Armenia carried out archaeological research in the site of Elegis during 2006-2007. Before excavations the area was thoroughly surveyed. Excavations began with investigation of the western side of the temple. On the whole, the external side of the church porch was cleared. Gravestones, some with inscriptions, were discovered here. Also a building with joint rooms and floor of bricks was uncovered. On the middle of each room hearths for heating were revealed. The floor was covered by slabs of unburnt bricks some of which were *in situ*. In 2007 the field research was focused on clearing the wall which surrounded the fortress enclosing the monument on the North-East side. In order to reach the goal we continued excavations here unearthing a long and narrow wall. Next to the walls destroyed rooms, often with hollow niches on the walls, were excavated. Archaeological finds (handmade, glazed and simple ceramics, metal objects - all of local origin but the glazed pottery imported probably from Tavriz) display the modest lifestyle of the poor population and the monkhood during the 12-14th centuries.